**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ**

# Ստուգաթերթ N 57
## Երիտասարդական ճամբարների և լեռնային բազաների գործունեություն
## Քեմփինգների (ճամբարների), ավտոհանգրվաններով բնակատեղերի, բնակության համար ավտոկցանքների կայանատեղերի տրամադրման ծառայություններ

**(ՏԳՏԴ ծածկագիր՝ 55.30.0)**

________________________ ________________ ______________
(տեսչության տարածքային մարմնի անվանումը) (գտնվելու վայրը) (հեռախոսահամարը)

________________________ ________________________________
(ստուգող անձի պաշտոնը) (ազգանունը, անունը, հայրանունը)

________________________ ________________________________
(ստուգող անձի պաշտոնը) (ազգանունը, անունը, հայրանունը)

________________________ ________________________________
(ստուգող անձի պաշտոնը) (ազգանունը, անունը, հայրանունը)

Ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ ______________________ ավարտը՝ ______________________

________________________________________ ________________
(տնտեսավարող սուբյեկտի անվանումը) (ՀՎՀՀ-ն)

________________________________________ ______________
(տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը) (հեռախոսահամարը)

________________________________________ ______________
(տնտեսվարող սուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի ազգանունը, անունը, հայրանունը) (հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագիր _______ ում կողմից ______________ երբ է տրված _______________

Ստուգման նպատակը /Ընդգրկված հարցերի համարներ ____________________________________

| N | Հարց | այո | ոչ | չ/պ | կշիռ | հղում | Ստուգման մեթոդ | Մեկնաբա-նություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Տեղակայման տարածքը ապահովված է ավտոմեքենաների և հետիոտնի համար կոշտ ծածկույթով պատված ճանապարհներով: | | | | 2 | Հղում 1, Կետ 2.2 | Տեսողական | |
| 2. | Տեղակայման տարածքը ապահովված է մակերևութային հոսքերի հեռացումով: | | | | 1 | Հղում 1, Կետ 2.2 | Տեսողական | |
| 3. | Տեղակայման տարածքը ապահովված է արհեստական լուսավորմամբ: | | | | 2 | Հղում 1, Կետ 2.2 | Տեսողական | |
| 4. | Ապահովված են ճամբարելու համար նախատեսված կետերով (ինչպես վրանների, այնպես էլ ավտոկցորդների համար): | | | | 2 | Հղում 1, Կետ 2.4 | Տեսողական | |
| 5. | Կենտրոնացված ջրահեռացման համակարգի բացակայության դեպքում ապահովվում է կեղտաջրերի հեռացումը ջրանթափանց հիմքով և պատերով (բետոնյա, ցեմենտյա կամ երկաթայնացմամբ սվաղված աղյուս) հորերում: | | | | 2 | Հղում 1<br>Կետ 3.1, 3.4<br>Հղում 4, կետ 16, | Տեսողական<br>Փաստաթղթային | |
| 6. | Կենտրոնացված ջրահեռացման համակարգի բացակայության դեպքում ապահովվում է կեղտաջրերի հեռացումը կեղտաջրերի մաքրման սարքավորումներով ապահոված տեղային կառույցներում: | | | | 2 | Կետ 3.1, 3.4<br>Հղում 4, կետ 16, | Տեսողական,<br>Փաստաթղթային՝ կառույցի անձնագիր | |
| 7. | Կեղտաջրերի մաքրման կառույցը կամ ջրանթափանց հիմքով հորը տեղակայված է բնակելի և հասարակական շենքերից ոչ պակաս 15 մ հեռավորության վրա: | | | | 3 | Հղում 1, կետ3.4<br>Հղում 4, կետ 16 | Տեսողական,<br>Չափագրում | |
| 8. | Կեղտաջրերը ջրանթափանց հորում կուտակելու դեպքում ունեն պայմանագիր մասնագիտացված կազմակերպության հետ՝ ասենիզացիոն մեքենայի միջոցով կեղտաջրերը տեղափոխելու համար: | | | | 3 | Հղում 1,Կետ 3.4<br>Հղում 4, կետ 17 | Տեսողական,<br>Փաստաթղթային | |
| 9. | Կեղտաջրերը ջրանթափանց հորից ժամանակին տեղափոխում են՝ ջրանթափանց հորերում 2/3-ից ավելի կեղտաջրերի կուտակում չկա: | | | | 3 | Հղում 1,Կետ 3.4<br>Հղում 4 կետ 17 | Տեսողական, | |
| 10. | Ապահովված են ջրամատակարարմամբ՝ սառը և տաք ջրով: | | | | 3 | Հղում 1<br>Կետ 3.2 | Տեսողական,<br>Փաստաթղթային՝ պայմանագիր կամ ջրօգտագործման թույլտվություն | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11. | Խմելու-տնտեսական ջրի որակը համապատասխանում է նորմին: նշում 1 | | | | 3 | Հղում 1, Կետ 3.3 Հղում 2 | լաբորատոր | |
| 12. | Տարածքում աղբի կուտակման համար ունեն կոնտեյներներ: | | | | 2 | Հղում 1, Կետ 5.4 | Տեսողական | |
| 13. | Տեղակայման տարածքը ենթարկվում է ամենօրյա մաքրման: | | | | 2 | Հղում 1, կետ 5.12 | Տեսողական | |
| 14. | Աղբի կուտակման կոնտեյներները կափարիչով են: | | | | 1 | Հղում 1, Կետ 5.5 | Տեսողական | |
| 15. | Կոնտեյներները տեղակայված են տարածքի տնտեսական հատվածում՝ առանձնացված հյուրերի համար հասանելի հատվածից: | | | | 1 | Հղում 1, Կետ 5.5 | Տեսողական | |
| 16. | Աղբահանությունը իրականացվում է պայմանագրային կարգով՝ մասնագիտացված կազմակերպության կողմից: | | | | 2 | Հղում 1, Կետ 5.5 | Տեսողական, Փաստաթղթային՝ պայմանագիր | |
| 17. | Աղբահանությունը իրականացվում առնվազն 3 օրը 1 անգամ: | | | | 2 | Հղում 1, կետ 5.5 | Տեսողական, Պայմանագիր, հարցում | |
| 18. | Ճանճերի և միջատների դեմ պայքարելու համար տնտեսական մասի պատուհանների բացվող բոլոր փեղկերը ցանցապատված են: | | | | 2 | Հղում 1, կետ 5.7 | Տեսողական | |
| 19. | Տարին մեկ անգամ պայմանագրային կարգով իրականացվում են դեզինսեկցիոն, դեռատիզացիոն աշխատանքներ: | | | | 2 | Հղում 1, կետ 5.8 | Տեսողական, Փաստաթղթային՝ պայմանագիր | |
| 20. | Ապահովված են անհրաժեշտ փափուկ գույքով՝ անկողնային սպիտակեղենով, սրբիչներով: | | | | 2 | Հղում 1, կետ 5.9 | Տեսողական | |
| 21. | Ապահովված են ախտահանիչ նյութերով: | | | | 2 | Հղում 1, կետ 5.12 | Տեսողական | |
| 22. | Ապահովված են մաքրման պարագաներով: | | | | 2 | Հղում 1, կետ 5.12 | Տեսողական | |
| 23. | Սահմանված կարգով իրականացվում է ախտահանում՝ **նշում 2** | | | | | | Տեսողական | |
| 23.1 | ցնցուղարանների | | | | 1 | Հղում 1, Կետ 5.13 հավելված 1.3 | | |
| 23.2 | հանդերձարանների | | | | 1 | Հղում 1, Կետ 5.13 հավելված 1.3 | | |
| 23.3 | լոգարանների | | | | 1 | Հղում 1, Կետ 5.13 | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | հավելված 1.3 | | |
| 23.4 | ավազանների | | | | 1 | Հղում 1, Կետ 5.13 հավելված 1.3 | | |
| 23.5 | սանիտարական սարքավորումների, լվացարանների, զուգարանի հատակի, պատերի | | | | 1 | Հղում 4, Կետ 31 | | |
| 23.6 | լվացքատան սենքերի | | | | 1 | Հղում 4, Կետ 31 | | |
| 23.7 | սպիտակեղենի տեղադրման դարակաշարերի | | | | 1 | Հղում 4, Կետ 31 | | |
| 24. | Ախտահանման ենթակա մակերեսներից վերցված լվացուկների մանրէաբանական հետազոտության արդյունքում շեղումներ չեն արձանագրվել | | | | 3 | Հղում 1, Կետ 5.13 հավելված 1.3 | լաբորատոր | |
| 25. | Օգտագործված սպիտակեղենը հավաքում են այդ նպատակով հատկացված սենքում (կափարիչով հատուկ տարաներում կամ դարակաշարերին) կամ պահարանում: | | | | 3 | Հղում 1 Կետ 5.14 | Տեսողական | |
| 26. | Օգտագործված սպիտակեղենը հավաքում են պիտակավորված պոլիէթիլենային պարկերում: | | | | 2 | Հղում 1, Կետ 5.14 | Տեսողական | |
| 27. | Օգտագործված սպիտակեղենը պահում են կարճ ժամանակահատվածում (3 օրից ոչ ավելի) | | | | 2 | Հղում 1 Կետ 5.14 | Տեսողական | |
| 28. | Փափուկ գույքը (սրբիչ, անկողնային պարագաներ) պահում են առանձին սենքում՝ դարակաշարերի վրա կամ առանձնացված պահարանում: | | | | 2 | Հղում 1, Կետ 5.15 | Տեսողական | |
| 29. | Անկողնային սպիտակեղենը փոխվում է ոչ պակաս, քան շաբաթը 2 անգամ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ավելի հաճախ: | | | | 1 | Հղում 1, Կետ 5.15 | Տեսողական, հարցում | |
| 30. | Սրբիչները փոխում են ամեն օր: | | | | 2 | Հղում 1, Կետ 5.15 | Տեսողական, հարցում | |
| 31. | Օբյեկտի կազմում գործող լվացքատունը ունի կեղտոտ և մաքուր հոսքերի շփումը բացառող կառուցվածքով սենքեր: | | | | 2 | Հղում 1 Կետ 5.16 | Տեսողական | |
| 32. | Լվացքատունը ունի դարակաշարեր՝ մաքուր սպիտակեղենի պահման համար: | | | | 3 | Հղում 1 Կետ 5.16 | Տեսողական | |
| 33. | Լվացքատունը ունի դարակաշարեր՝ կեղտոտ սպիտակեղենի պահման համար | | | | 2 | Հղում 1 Կետ 5.16 | Տեսողական | |
| 34. | Լվացքատան բացակայության դեպքում սպիտակեղենի լվացումը իրականացվում է պայմանագրային կարգով՝ սպիտակեղենի լվացման գործունեությամբ զբաղվող կազմակերպությունում: | | | | 2 | Հղում 1 Կետ 5.16 | Պայմանագիր | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 35. | Ապահովված են առաջին բուժօգնության արկղիկով: | | | | 2 | Հղում 1, Կետ 5.17 | Տեսողական | |
| 36. | Աշխատակիցների համար հատկացված են հանդերձարաններ: | | | | 2 | Հղում 1, Կետ 6.2 | Տեսողական | |
| 37. | Հանդերձարանում կան հագուստի պահարաններ: | | | | 2 | Հղում 1, կետ 6.2 | Տեսողական | |
| 38. | Աշխատակիցների համար հատկացված է սանհանգույց: | | | | 1 | Հղում 1, կետ 6.2 | Տեսողական | |
| 39. | Աշխատողները ապահովված են՝ արտահագուստի 2-ական լրակազմով: | | | | 2 | Հղում 1, Կետ 6.3 | Տեսողական | |
| 40. | Սենքերի, ցնցուղարանների և զուգարանների մաքրման համար օգտագործվող մաքրման պարագաները պահվում են ըստ իրենց նշանակության՝ առանձին տարածքներում: | | | | 1 | Հղում 1, Կետ 5.11, 6.2, Հղում 4, կետ 9, 28 | Տեսողական | |
| 41. | ճամբարելու կետից առավելագույնը 100 մ հեռավորության վրա տեղակայված են սանհանգույցները: | | | | 2 | Հղում 1, Կետ 2.5 | Տեսողական | |
| 42. | Սանհանգույցները ապահովված են կանանց 20 և տղամարդկանց 25 հոգու համար՝ 1-ական զուգարանակոնքով: | | | | 2 | Հղում 1, Կետ 2.5 | Տեսողական | |
| 43. | Ապահովված են 20-25 հոգուն 1 լվացարանով: | | | | 2 | Հղում 1, Կետ 2.5 | Տեսողական | |
| 44. | ճամբարելու կետից առավելագույնը 100 մ. հեռավորության վրա տեղակայված են ցնցուղարանները. | | | | 2 | Հղում 1, Կետ 2.5 | Տեսողական | |
| 45. | Ապահովված են մինչև 50 հոգուն՝ 1 ցնցուղով: | | | | 2 | Հղում 1, Կետ 2.5 | Տեսողական | |
| 46. | Հասարակական զուգարանների հատակի կառուցվածքը ապահովում է հեղուկների հոսքը դեպի կոյուղու ցանցին միացված տրապը: | | | | 2 | Հղում 4,կետ 14. | Տեսողական | |
| 47. | Զուգարանի պատերը պատված են հեշտ լվացվող, հարթ և ջրանթափանց նյութերով (կերամիկական և մետլախե սալիկներ, մարմարի փշրանքով մոզաիկ հատակ և այլն): | | | | 3 | Հղում 4, Կետ 14. | Տեսողական | |
| 48. | Ոչ սեզոնային (ամառային) օբյեկտների հասարակական զուգարանները ջեռուցվում են: | | | | 2 | Հղում 4,Կետ 10. | Տեսողական | |
| 49. | Հասարակական զուգարանը ապահովված է փակվող դռներով անհատական խցերով: | | | | 2 | Հղում 4, կետ 9,12 | Տեսողական | |
| 50. | Հասարակական զուգարանը ապահովված է նախամուտքով, որտեղ տեղադրված են լվացարանները: | | | | 2 | Հղում 4, կետ 9,12 | Տեսողական | |
| 51. | Հասարակական զուգարանի անհատական խցերում և նախամուտքում կան պատի կախիչներ՝ կեռիկներով՝ վերին հագուստների համար: | | | | 1 | Հղում 4, կետ 9,12 | Տեսողական | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 52. | Զուգարանը ունի արհեստական լուսավորություն: | | | | 2 | Հղում 4, կետ 10. | Տեսողական | |
| 53. | Զուգարանների նախամուտքում տեղադրված լվացարանները ունեն արմնկային կամ ոտնակային կառավարման ծորակներ կամ էլ առանց ծորակի կառավարման հարմարանքի՝ զգայական (սենսոր) կառավարմամբ են: | | | | 2 | Հղում 4, կետ 9, 12 | Տեսողական | |
| 54. | Ճանճերից պաշտպանվելու համար հասարակական զուգարանի սենքերի լուսամուտների օդանցքները ցանցապատված են: | | | | 2 | Հղում 4, կետ 27 | Տեսողական | |
| 55. | Զուգարանը ապահովված է. ձեռքերի չորացման համար էլեկտրական սարքերով կամ թղթյա միանվագ օգտագործման սրբիչներով | | | | 1 | Հղում 4, կետ 26 | Տեսողական | |
| 56. | Զուգարանը ապահովված է զուգարանի թղթով: | | | | 2 | Հղում 4, կետ 26, Հղում 1, կետ 5.12 | Տեսողական | |
| 57. | Զուգարանների սենքերը և սարքավորումները պահվում են մաքուր վիճակում՝ պատերին, հատակին և սարքավորումների մակերեսներին չկան տեսանելի աղտոտվածության հետքեր կամ հատակի մակերեսին ջրակուտակումներ, խոնավություն: | | | | 3 | Հղում 4, Կետ 34 | Տեսողական | |
| 58. | Հասարակական զուգարանի մաքրման և ախտահանման աշխատանքների վերաբերյալ պատին փակցված է ժամանակացույց: | | | | 1 | Հղում 4, կետ 29 | Տեսողական | |
| 59. | Պատին փակցված ժամանակացույցում աշխատակցի կողմից կատարվում են նշումներ՝ յուրաքանչյուր մաքրման աշխատանքից հետո: | | | | 1 | Հղում 4, կետ 29 | Տեսողական | |
| 60. | Զուգարանում կենցաղային աղբը կուտակում են աղբարկղներում: | | | | 2 | Հղում 4, Կետ 26 | Տեսողական | |
| 61. | Աղբարկղները կափարիչի ոտնակային հարմարանքով են: | | | | 1 | Հղում 4, Կետ 26 | Տեսողական | |
| 62. | Աղբարկղներում տեղադրված են պոլիէթիլենային տոպրակներ: | | | | 2 | Հղում 4, Կետ 26 | Տեսողական | |
| 63. | Իրականացվում է հասարակական զուգարանի ամենօրյա ախտահանում՝ առնվազն 2 անգամ և ըստ անհրաժեշտության: | | | | 2 | Հղում 4, Կետ 34 | Տեսողական հարցում | |
| 64. | Մաքրման պարագաները ախտահանում են աշխատանքային օրվա վերջում՝ նատրիումի հիպոքլորիդի (0.5%), քլորամին Բ-ի (1%) կամ Առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգով թույլատրված համարժեք այլ լուծույթների մեջ 1 ժամ ընկղմելով, որից հետո՝ պարզաջրելով: | | | | 2 | Հղում 4, Կետ 32 | Տեսողական հարցում | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 65. | Հասարակական զուգարանի սենքերի հիմնական մաքրումը կատարվում է շաբաթը մեկ անգամ՝ ախտահանիչ նյութերի օգտագործմամբ (6%-անոց ջրածնի գերօքսիդի և 0.5%-անոց լվացող նյութի խառնուրդով): Հիմնական մաքրումը ընդգրկում է սենքերի պատերը, հատակը, առաստաղը, պատուհանները, դռները, աղբարկղները և սարքավորումները: | | | | 2 | Հղում 4, Կետ 35 | Տեսողական հարցում | |
| 66. | Զուգարանների զուգարանակոնքերի և միզամանների ջրի տակառիկները և լվացարանները ապահովված են մշտական հոսող (առնվազն) սառը ջրով: Մշտական հոսող ջրի բացակայության դեպքում ջրի տակառիկների և լվացարանների ջրագծերը լրացուցիչ միացված են անհրաժեշտ ծավալով խմելու ջրի տարողությունների: | | | | 3 | Հղում 4, Կետ 39 | Տեսողական հարցում | |
| 67. | Զուգարանակոնքերի և միզամանների ջրի տակառիկները և մյուս սարքավորումները շահագործվում են սարքին վիճակում: Կեղտաջրերի հեռացման համակարգի, լվացարանների, զուգարանակոնքերի և միզամանների, ջրի տակառիկների, օդափոխիչ համակարգերի և այլ սարքավորումների անսարքությունները վերացվում են անմիջապես: | | | | 3 | Հղում 4,Կետ 38. | Տեսողական | |
| 68. | Զուգարանները ապահովված են բնական օդափոխանակությամբ (պատուհաններ, վերնափեղկեր) կամ օդի արտածգման մղանցքներով (խորշերով): | | | | 1 | Հղում 4, Կետ 11. | Տեսողական | |
| 69. | Շարժական զուգարանների առկայության դեպքում՝ դրանք տեղակայված են բնակելի և հասարակական շենքերից առնվազն 15 մ հեռավորության վրա: | | | | 3 | Հղում 4, Կետ 21 | Տեսողական, չափագրում | |
| 70. | Շարժական զուգարանները ունեն կեղտաջրերի կուտակման և տեղային մաքրման կառուցվածք (տարողություն) կամ միացած են ջրմուղու և կոյուղու ցանցերին: **Նշում 3** | | | | 3 | Հղում 4, Կետ 22, 23 | Տեսողական | |
| 71. | Շարժական զուգարանների շահագործումը և կուտակված կեղտաջրերի հեռացումը իրականացվում է տեխնոլոգիական հրահանգին համապատասխան: | | | | 3 | Հղում 4, Կետ 23. | Տեսողական փաստաթղթային | |
| 72. | Զննության ենթակա անձնակազմը ունի պարբերական բժշկական զննության գրքույկ **Նշում 4** | | | | 1 | Հղում 1, կետ 6.4, Հղում 3 | փաստաթղթային | |
| 73. | Պարբերական բժշկական զննության գրքույկը համապատասխանում է պահանջվող ձևին: | | | | 1 | Հղում 1, կետ 6.4, Հղում 3 | փաստաթղթային | |
| 74. | Պահպանվում է պարբերական բժշկական զննության հետազոտությունների ծավալը: | | | | 1 | Հղում 1, կետ 6.4, Հղում 3 | փաստաթղթային | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 75. | Պահպանվում է պարբերական բժշկական զննության հետազոտությունների հաճախականությունը: | | | | 1 | Հղում 1, կետ 6.4, Հղում 3 | փաստաթղթային | |

**Հղում 1.** ՀՀ առողջապահության նախարարի 12.02.07 թ. N 236 հրամանով հաստատված «Հյուրանոցային տնտեսության օբյեկտների տեղակայմանը, կառուցվածքին և շահագործմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N2-III-2.1. սանիտարական կանոններ և նորմեր

**Հղում 2.** ՀՀ առողջապահության նախարարի 25.12.02 թ. N 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա 2-1 սանիտարական նորմեր և կանոններ,

**Հղում 3.** ՀՀ կառավարության 2003թ. մարտի 27-ի «Առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության կարգը, գործունեության ոլորտների, որոնցում զբաղված անձինք ենթակա են առողջական վիճակի պարտադիր բժշկական զննության և բժշկական զննության ծավալի ու հաճախականությունների ցանկը և անձնական սանիտարական (բժշկական) գրքույկի ու բժշկական զննության ենթակա անձանց անվանացանկի ձևերը հաստատելու մասին» թիվ 347-Ն որոշում:

**Հղում 4.** ՀՀ առողջապահության նախարարի 16.04.09 թ. N 06-Ն «Հասարակական զուգարաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-2.13 սանիտարական կանոններ և նորմեր

## Նշում 1

### ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԱԿԱԲՈՒԾԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆՈՐՄԵՐ

| Ցուցանիշներ | Չափման միավորներ | Նորմաներ |
|---|---|---|
| Ջերմատոլէրանտ կոլիֆորմ մանրէներ 1/ | 100 մլ-ում մանրէների քանակ | Բացակայություն |
| Ընդհանուր կոլիֆորմ մանրէներ | 100 մլ-ում մանրէների քանակ | Բացակայություն |
| Մանրէների ընդհանուր քանակություն | Գաղութներ առաջացնող մանրէների քանակը 1 մլ-ում | 50-ից ոչ ավել |
| կոլիֆագեր 3/ | Վահանակ առաջացնող միավորների (ՎԱՄ) քանակը 100 մլ-ում | Բացակայություն |
| Սուլֆիտվերականգնող կլոստրիդիաների սպորներ 4/ | Սպորների քանակը 20 մլ-ում | Բացակայություն |
| Լյամբլյաների ցիստեր 3/ | Ցիստերի քանակը 50 մլ-ում | Բացակայություն |

1/ Որոշման ժամանակ կատարվում է վերցված 100 մլ ջրի նմուշի եռանվագ հետազոտություն:
3/ Հետազոտությունները կատարվում են միայն մակերեսային ջրի աղբյուրներից սնվող ջրամատակարարման համակարգերում մինչև ջրաբաշխիչ ցանց մտնելը:
4/ Հետազոտությունը կատարվում է ջրի մշակման տեխնոլոգիական եղանակի արդյունավետության գնահատման ժամանակ:

## ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԶԳԱՅՈՐՈՇԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆՈՐՄԵՐ

| **Ցուցանիշներ** | **Չափման միավորներ** | **Նորմեր, ոչ ավելի** |
|---|---|---|
| Հոտ | բալեր | 2 |
| Համ | -//- | 2 |
| Գունավորում | աստիճաններ | 20 /35/ 1) |
| Պղտորություն | ՖՊՄ (ըստ ֆորմազինի) պղտորության միավոր կամ մգ/լ (ըստ կաոլինի) | 2.6 /35/ 1)<br>1.5 /2/ 1) |

## Նշում 2

Հավելված 1.3

| **Օբյեկտների անվանումը** | **Ախտահանող ռեագենտ** | **Ախտահանման ռեժիմը** | | **Մշակման եղանակը** |
|---|---|---|---|---|
| | | **լուծույթի խտ. տոկոս-ներով** | **ժամա-նակա-հատ վածը՝ րոպե-ներով** | |
| **Սանիտարատեխնիկական սարքեր (լվացարաններ, դռան բռնակներ, ջրի փականներ և այլն)** | **ա) լվացողախտահանող նյութեր բ) քլորամին Բ գ) 0.5 %-անոց լվացող նյութի և քլորամին Բ-ի խառնուրդ** | **0.5 գ 100² սմ մակերեսի վրա<br>1** | **5** | **շփում 2 անգամ** |
| **Սենքեր, կահավորման իրեր** | **դ) 0.5 %-անոց լվացող նյութի և ջրածնի պերօքսիդի խառնուրդ** | **0.75<br>3** | | |

կամ ՀՀ առողջապահության նախարարության կողմից թույլատրված որևէ ախտահանիչ նյութով, դրա օգտագործման հրահանգին համապատասխան:

Հասարակական զուգարաններում սանիտարական սարքավորումների, լվացարանների, երեխաների տակդիրների փոխման համար սեղանների, հատակի, պատերի ախտահանման (երկնվագ սրբում, ողողում ջրով) համար օգտագործվում է 1%-ոց քլորամին Բ, լվացող-ախտահանող միջոցներ՝ 5 գ. 100սմ² մակերեսի հաշվարկով, 0.5-%-անոց լվացող նյութի և քլորամին Բ-ի խառնուրդ, կալցիումի հիպոքլորիդի (0.5%) կամ Առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգով թույլատրված համարժեք այլ լուծույթներ:

Մաքրման պարագաները ախտահանում են աշխատանքային օրվա վերջում՝ նատրիումի հիպոքլորիդի (0.5%), քլորամին Բ-ի (1%) կամ Առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգով թույլատրված համարժեք այլ լուծույթների մեջ 1 ժամ ընկղմելով, որից հետո՝ պարզաջրելով:
Սենքերի հիմնական մաքրումը կատարվում է շաբաթը մեկ անգամ՝ ախտահանիչ նյութերի օգտագործմամբ (6%-անոց ջրածնի գերօքսիդի և 0.5%-անոց լվացող նյութի խառնուրդով): Հիմնական մաքրումը ընդգրկում է սենքերի պատերը, հատակը, առաստաղը, պատուհանները, դռները, աղբարկղները և սարքավորումները:

**Նշում 3** Տեղային մաքրման կառուցվածքը իրենից ներկայացնում է կեղտաջրերի ընդունման տարողություն, որը պարունակում է մանրէները քայքայող կենսաբանական ակտիվ հեղուկ և գարշահոտությունը վերացնող հեղուկ:
Շարժական զուգարանների լվացարանը տեղադրվում է նախամուտքում կամ դրա բացակայության դեպքում՝ անմիջապես խցում: Լվացարանի բացակայության դեպքում շարժական զուգարանը ապահովվում է ախտահանիչ նյութով տոգորված միանվագ օգտագործման անձեռոցիկներով:
Հանգստի գոտիներում լվացարանը կարող է տեղակայվել բացօթյա՝ շարժական զուգարանին անմիջապես հարակից տարածքում:

## Նշում 4

| Կազմակերպությունները | Թերապևտի (ընտանեկան բժշկի) կողմից զննում | Մաշկավե-ներաբանի կողմից զննում | Հետազոտու- թյուններ՝ պալարախտի հայտնաբերման համար | Արյան հետազո-տություն՝ սիֆիլիսի, սուսանակի, տրիխոմոնազի, քլամիդիոզի, ուրեոպլազմոզի (քսուք, քերուկ), հայտնաբերման համար | Հետազոտու-թյուններ՝ աղիքային վարակիչ հիվանդությունների (մանրէակրություն) հայտնաբերման համար | Հետազոտու-թյուններ՝ որդակրության հայտնաբեր- ման համար |
|---|---|---|---|---|---|---|
| **Առողջարանների, հանգստյան տների, մարզա-առողջարանային կազմակերպությունների աշխատողներ, ծերանոցների աշխատողներ, ովքեր անմիջապես սպասարկում են բուժվողներին և հանգստացողներին** | աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ | աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ | աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարեկան մեկ անգամ | աշխատանքի ընդունվելիս հե-տազոտություն՝ սիֆիլիսի (յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ), սուսանակի (քսուք՝ յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ) հայտնաբերման համար | աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ | աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ |
| **Բնակչության կոմունալ-կենցաղային սպասարկման կազմակերպությունների (բաղնիքներ, շոգեբաղնիքներ, լվացքատներ,) աշխատողներ, ովքեր ընդգրկված են տեխնոլոգիական գործընթացներում կամ սպասարկման ոլորտում (այդ թվում՝ մերսողներ)** | աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ | աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարեկան մեկ անգամ | աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարեկան մեկ անգամ | աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարեկան մեկ անգամ | աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ | աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ |
| **Հյուրանոցային տնտեսության օբյեկտների, հանրակացարանների սպասարկման հարցերով զբաղված աշխատողներ** | աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ | աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարեկան մեկ անգամ | աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարեկան մեկ անգամ | աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարեկան մեկ անգամ | աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ | աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ |

Տեսուչի ստորագրությունը ______________________ Տնտեսվարողի ստորագրությունը ______________________